

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 18/08

Քաղ. Երևան

29 հուլիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ.Վարդանյան, Գ.Յ.Ադամյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. հուլիսի 29-ի նիստում (արձանագրություն №63/2) քննարկեց «Գրանդ Տոբակո» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2008թ. մայիսի 16-ի դիմումը՝ Ակցիոներնո Դրոուժեստվո «Բուլգարտաբակ-հոլդինգ» (BG) ընկերության անունով գրանցված «SILVER» (ՀՀ վկ.դ4070) ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱՃՄԴ-ի 34-րդ դասի ապրանքների նկատմամբ վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ «Գրանդ Տոբակո» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում կատարված մարքեթինգային ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «SILVER» (ՀՀ վկ.դ4070) ապրանքային նշանն իր անվամբ գրանցած Ակցիոներնո Դրոուժեստվո «Բուլգարտաբակ-հոլդինգ» (BG) ընկերությունը գրանցման թվականից ի վեր այն չի օգտագործել և չի օգտագործում ավելի քան 5 տարի:

Ելնելով դրանից և առաջնորդվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն որի «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն անընդհատորեն (ընդհանրապես) չի օգտագործվել ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից», դիմողը խնդրել է «SILVER» (ՀՀ վկ. դ4070) ապրանքային նշանի գրանցման

գործողությունը վաղաժամկետ դադարեցնել գրանցված ԱԾՄԴ-ի 34-րդ դասի բոլոր ապրանքների համար:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 26.05.08թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ տեղեկացրել է «SILVER» (ՀՀ վկ. դ4070) ապրանքային նշանի սեփականատեր Ակցիոներնո Դրոուժեստվո «Բուլգարտաբակ-հոլդինգ» (AKTIONERNO DROUJESTVO "BOULGARTABAK - HOLDING" Sofia, oulitsa Graf Ignatiev, 62 BG-1000, Bulgaria) ընկերությանը բողոքարկման խորհրդի կողմից 2008թ. մայիսի 16-ին «Գրանդ Տոբակո» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. հուլիսի 29), ՀՀ արտոնագրային հավատարմատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր նկատառումները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին:

Ըստ մտավոր սեփականության գործակալության կողմից ստացված հետծանուցման, հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստացվել է 09.06.08թ.: Սակայն 2008թ. հուլիսի 29-ի բողոքարկման խորհրդի նիստին ոչ սեփականատերը, ոչ էլ սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չեն ներկայացել, ինչպես նաև դիմումի վերաբերյալ որևէ գրավոր արձագանք բողոքարկման խորհուրդը չի ստացել:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով նիստում դիմումի ըստ էության քննարկման արդյունքները և այն փաստը, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերության համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները պետք է ներկայացնի դրա սեփականատերը, տվյալ դեպքում Ակցիոներնո Դրոուժեստվո «Բուլգարտաբակ-հոլդինգ» (BG) ընկերությունը, որի պատշաճ ծանուցելու հնարավորությունները սպառված են, սակայն ապրանքային նշանը ՀՀ-ում օգտագործելու վերաբերյալ որևէ փաստ, ապացույց կամ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցիչից այդպես էլ չի ներկայացվել, որից կարելի է եզրակացնել, որ այդ ընկերությունը «SILVER» (ՀՀ վկ. դ4070) ապրանքային նշանը չի օգտագործել Հայաստանում, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ «Գրանդ Տոբակո» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Գրանդ Տոբակո» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2006թ. մայիսի 16-ի դիմումը ամբողջովին և Ակցիոներնո Դրոուժեստվո «Բուլգարտաբակ-հոլդինգ» (BG) ընկերության անունով գրանցված «SILVER» (ՀՀ վկ. դ4070) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ գրանցված ԱՃՄԴ-ի 34-րդ դասի բոլոր ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան